ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար <<ԱՄԱՀ-ԲՄԽԾՁԲ-25/77 > ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ <<19>> օգոստոսի 2025թ.ժ.10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Արա Ստեփանյան – աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,

Անդամներ

Կարեն Կարապետյան - աշխատակազմի կոմունալ տնտեսության, գույքի կառավարման, տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Քաջիկ Վարդանյան - աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Արման Աբրահամյան - աշխատակազմի կոմունալ տնտեսության, գույքի կառավարման, տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի առաջատար մասնագետ

Վահե Բադալյան - աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար

Փայլակ Հակոբյան – աշխատակազմի գնումների բաժնի պետ

1. Տեղեկություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին
2. Տեղեկություններ հայտերի գնահատման մասին

1. Տեղեկություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին

1.1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից և հանձնաժողովի նիստին մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար, Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017թվականի թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, հանձնաժողովի նիստը համարել իրավազոր և հայտարարել բացված:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2.Տեղեկություններ հայտերի գնահատման մասին

2.1. ԱՍ Քոնթրլ ՍՊԸ-ի ներկայացված հայտը կազմված է հրավերի պահանջներին , առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը,փաստաթղթերը կազմված են հրավրեի պահանջներին համապատասխան, բացառությամբ 1. հայտով ներկայացված 2019-2025թթ պատշաճ ձևով պայմանագիրը , որը կնքված է ՋԻԷՍՓԻ ՍՊԸ-ի և ԱՍ Քոնթրոլ ՍՊԸ-ի միջև որի պայմաագրային գումարը կազմում է 2800000 /երկու միլիոն ութ հարյուր հազար ՀՀ դրամ, ներառում է ՝ բազմաբնակարան շենքի կառուցում, հողային աշխատանքների տեխնիկական հսկողություն /տարածքի հարթեցում և ճանապարհային

պաստառների իրականացում, շենքի հիմքի հողային և ե/բ աշխատանքների իրականացում, արտաքին ջրագծի միացում, շին. հրապարակի ներքին ջրամատակարարման և կոյուղում իրականացման աշխատանքներ/ , սակայն հրավերի առաջին մասի 2.4.1 կետի 1-ին ենթակետով պահանջվել է որպես նմանատիպ նախկինում կատարված աշխատանք ՝ <<Ասֆալտապատման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նախկինում կատարված պայմանագրերը>>, ինչպես նաև հանձման-ընդունման արձանագրության մեջ նշված է որպես կատարողը պատվիրատուին հանձնել է կառուցվող բազմաբնակարան շենքի <<**հողային աշխատանքների**>> տեխնիկական հսկողության ծառայություն, սակայն պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ թիվ 1 ակտով ՝ Պատվիրատուին հանձնել է <<Կառուցում, բազմաբնակարան բնակելի շենք >> (Գտնվելու վայրտ Կոտայքի մարզ , Աբովյան համայնք, ք Աբովյան Զորավար Անդրանիկի փողոց 98/1 հողամաս, 07-0020039-1779) , (ճարտարապետահատակագծային առաջադրնաք՝ N ՆԹ-218924 23,12,2024թ) հողային աշխատանքների տեխնիկական հսկողությունը մասնավորապես՝. շենքի հիմքի հողային և ե/բ աշխատանքների իրականացում,

.տարածքի հարթեցում և ճանապարհային պաստառի իրականացում

.արտաքին ջրագծի միացում, շին. հրապարակի ներքին ջրամատակարարման և կոյուղու իրականացման աշխատանքներ, տարածքի ոռոգման ցանցի իրականացման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում:
Ելնելով վերնշվածներից ՝ հայտով ներկայացված պայմանագրում, հանձման-ընդունման արձանագրությունում և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ թիվ 1 ակտում արտացոլված չեն հրավերով պահանջվող <<Ասֆալտապատման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նախկինում կատարված պայմանագրերը>> հիմնավորող փաստաթղթերը:

2. հայտով ներկայացված <<ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՆՔՎԵԼԻՔ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ (ՍԱՐՔԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ) ՄԱՍԻՆ>>

հավելված 1.1-ով բացակայում է սկլոմետր, լազերային չափերիզ, բետոնի պաշտպանիչ շերտի որոշման սարքի տեխնիկական միջոցների տիպը:

Բացակայում են սկլերոմետր , բետոնի պաշտպանիչ շերտի որոշման սարքի տեխնիկական անձնագրերը, իսկ ներկայացված թիվ 117939 ստուգաչափման վկայականի վավերականության ժամկետը լրացել է 2025 թվականի փետրվարի 21-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 04 մայիս 2017թ 526-Ն որոշման 41-րդ կետը գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել և ԱՍ ՔՈՆԹՐՈԼ ՍՊԸ առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում մինչև նիստի կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունները:

2. ԱՄԱՀ-ԲՄԽԾՁԲ-25/77 ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստ հրավիրել 2025 թվականի օգոստոսի 25 -ին ժամը 11.00-ին

Գնահատող հանձնաժողովի նախագահ ---------- Արա Ստեփանյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ ---------- Կարեն Կարապետյան

---------- Քաջիկ Վարդանյան

---------- Արման Աբրահամյան

---------- Վահե Բաղալյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար ---------- Փայլակ Հակոբյան